

ՈՒՂՂԵԼԻ ՄԻ ԿԵՏ ՓԱԽՍՏՈՍ ԲԻԻԶԱՆԴԻ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Որչափ էլ մեր հին մատենագիրների դործերը քրքրուած լինեն, բայց և այնպէս դեռ շատ ուղղելի կէտեր կան, որոնք կարող են շատ բան պարզել, և այս կամ այն եղրակացութիւնը գրել կամ հաստատել: Այսպիսի մի սխալ կէտ Փաւստոսի պատմութեան մէջ կամենում ենք ուղղել, և կարծում ենք, թէ այդ սրբագրութիւնը շատ կարեւոր է:

Փաւստոսը իւր պատմութիւնը սկսում է մի ընդհանուր խոստաբանութեամբ (= յառաջաբան), ուր ասում է. «Այս ինչ է ի դպրութիւնս երրորդ՝ պատմութեանցս, ժամանակագիր կանոնք մատենից (= պատմութեանց ժամանակագրական ցանկի), և առ նմին դպրութիւնք երեք, այսինքն են սոքա չորք մատեանք և չորեքին միոյ իրաց յիշատակարանք են, յիշեցուցիչք պատմութեանց ազգացն Հայաստան աշխարհին»: Կարծում ենք, թէ այս հատուածի իմաստը հասկանալու և մտքով յաջորդ մասերի հետ կապակցելու համար այնտեղ պէտք է մի փոփոխութիւն մտցնել, այն է՝ վերցնել բութը երրորդ բառի մօտից, ինչպէս որ դրուած է բոլոր տպագրութիւնների մէջ, և դնել «ի դպրութիւնս» բառից յետոյ, այսպէս «Այս ինչ է ի դպրութիւնս՝ երրորդ պատմութեանցս»: Մի այսպիսի ինքնըստինքեան աննշան բայց կարեւոր, փոփոխութիւն անել ստիպում է Յառաջաբանի ամբողջ միտքը, ուր հեղինակը իւր գրելիք պատմութեան ամբողջ բովանդակութիւնն է ներկայացնում և ոչ թէ միմիայն երրորդ դպրութեան պարունակութիւնը:

Այսպիսի փոփոխութեամբ այն ևս կը պարզուի, որ Փաւստոսը իւր գրուածքը կոչել է «Երրորդ պատմութիւնք»: Ո՞վ է գրել Առաջին և երկրորդ պատմութիւնը:

Այս հարցման կրկին Փաւստոսն է պատասխանում իւր երկրորդ Յառաջաբանի մէջ (գլ. Ա.) ասելով. «է ինչ մեր պատմութիւն, որ առաջին է, և է ինչ, որ վերջին է. իսկ որ միջին ինչ եղև, այն ի ձեռն այլոց գրել գրեցաւ»։ Ի նկատի առնելով վերոյիշեալ սրբագրութիւնը՝ այստեղից պարզ կը տեսնենք, որ Փաւստոսը գրել է Հայոց Առաջին կամ Նախնական և Երրորդ կամ վերջին պատմութիւնը. իսկ միջին կամ Երկրորդ պատմութիւնը ուրիշներն են գրել։ Եւ որովհետև Առաջին պատմութիւնը երկու դըպրութիւններէց է կազմուած եղել, այս պատճառով էլ Երրորդ պատմութիւնը երրորդ դըպրութեամբ է սկսում։ Այսպէս միայն կապակցուած են Փաւստոսի կրկին յառաջաբանները (Փաւստոսի նմանութեամբ Դ. Փարպեցին ևս կրկին յառաջաբաններ ունի, և կարծում ենք, որ երկրորդ յառաջաբանը—ընդ բազում ճառս մատենից—պէտք էր բուն գրքի մասը համարել և Դրուագ Ա.-ի տակ դնել Փաւստոսի նման, և ոչ թէ միայն տպագրել)։

Բայց «Նախագիտելի խոստաբանութեան» մէջ մի ուրիշ ուղղելի կէտ ևս կայ, այն է՝ «Ժամանակագիր կանոնք մատենից» բառերից յետոյ՝ անշուշտ պէտք է աւելացնել «Երրորդ դըպրութիւն» բառերը, ինչպէս որ յաջորդող «առ նմին» խօսքն էլ պահանջում է, այսպէս. «Այս ինչ է ի դըպրութիւնս՝ երրորդ պատմութեանցս. ժամանակագիր կանոնք մատենից. երրորդ դըպրութիւն և առ նմին դըպրութիւնք երեք... սոքա չորք մատեանք»։ Փաւստոսը կանխահոգ մտածութեամբ ունեցել է այստեղ մեր աւելացրած «Երրորդ դըպրութիւն» բառը թերութեան որ և է կասկած փարատելու համար։

Բայց Փաւստոսի գրած Հայոց Նախնական կամ Առաջին պատմութիւնը՝ որ առանձին դործ է եղել երկու դըպրութեամբ, ծանօթ չէ եղել նաև Դ. Փարպեցուն, որ ոչ միայն այդ մասին յիշատակութիւն չի անում, այլ և սխալուելով Ագաթանգեղոսի պատմութիւնը համարում է Առաջին պատմութիւն, Փաւստոսինը՝ երկրորդ, իսկ իւր գրածը՝ երրորդ։

Մնացել է արդեօք Փաւստոսի Առաջին պատմութիւնը. այդ մասին մի այլ անգամ:

Հանգամանքից օգտուելով բանասէրների ուշադրութիւնը հրաւիրում ենք մի կէտի վրայ եւս: Մեծ հաւանականութեամբ եղծ Աղանդոց գրքի հեղինակ Եղնիկը նոյնացում է Սահակ Պարթևի աշակերտ Եղնիկի հետ, որ ս. Գրքի երկրորդ թարգմանութեան կամ սրբագրութեան մասնակցել է: Բայց ինչպէս կարելի է հետևեալը բացատրել: Եղծ Աղանդոցի մէջ (եր. 98) հեղինակը խօսելով յուշկապարիկների մասին՝ մէջ է բերում ս. Գրքի մէկ խօսքը—«Յուշկապարկաց ասեն բնակել յաւերակսն», և ապա աւելացնում է. «զոր յոյն լեզու իշացուլս ասէ», այսինքն թէ հայերէն Աստուածաշնչի մէջ յուշկապարիկ է, իսկ յունարէնի մէջ իշացուլ: Արդ կարո՞ղ էր Աստուածաշնչի թարգմանութեան մասնակցող Եղնիկը մի այսպիսի համեմատութիւն անել. յետնութեան նշան չէ արդեօք:

2.

14 հոկտ. 1903 թ.

